

Բիեղրանէրայէն ելան և արագու-
թեամբ ձիերնին կը վազցընէին . երբոր
գետակ մը հասան, ծերունի բոլց կրիֆ-
ֆոն շատ մը խողեր տեսաւ, որոնք տըլ-
մին մէջ թաւալեր էին և կը վայլէին
արեն ու ջրին զովութիւնը : Մէկէն նը-
շան առաւ ամենէն դէր խողին, և հրա-
ցանը պարպածին պէս՝ սպաննեց զա-
նիկայ : Կենդանւոյն ընկերքն անմիջա-
պէս կայծակի պէս երազութեամբ փա-
խան, և թէպէտ միւս հովիւն ալ հրա-
ցան պարպեց վրանին, բայց անոնք ան-
վսաս ազատեցան անտառի մը մէջ :

— Ուրբմելի մարդիկ, զուրցեց Օր-
ոյ . խողերը վարազ կը կարծէք :

— Զէ, Օրս' Անտոն, պատասխանեց
Բօլց կրիֆֆոյ, անանկ չէ, հապա այդ
խողերը փաստաբանինն են, ձիուն ա-
կընջին փոխարէնն ըրինք :

— Չեզի պէս անզգամներ, աղաղա-
կեց Օրոյ բարկութենէն կրակ կըու-
րած, դուք ալ մեր թշնամեաց ըրած
ցածութեանը կը նմանիք : Գացէք քո-
վէս . ձեզի պէտք չոնիմ . դուք խողե-
րուն հետ կուտելու կտրիճ էք : Կ'եր-
դուլննամ որ եթէ յանդրգնիք հետա-
դալու, դուխնիդ կը ջախջախեմ :

Երկու հովիւները պազ մնացին ու
իրարու կը նայէին : Օրոյ ոտքին մըտ-
րակներովը ձիուն փորին ղարկաւ, և
աներեսոյթ եղաւ :

— Տեսան հիմա, ըստաւ Բօլց կրիֆֆոյ՝
ընկերովը . եկուը սիրէ աս մարդիկներն
որ այս կերպով կը վարուին հետդ : Ա-
տոր հայրը, հազարապետը, սրդողեցաւ
քեզի՝ անգամ մը փաստաբանին վրայ
հրացան շտկելուդ համար . . . անխելք
եղար որ չպարպեցիր : . . . իսկ որդին . . .
տեսար ինչ ըրի իրեն համար . . . կը
սպառնայ զլուխս ջախջախել, ինչպէս որ
կը ջախջախեն զդումէ անօթ մը որ ալ
մէջը զինի չկրնար պահել : Ահա ասանկ
բաներ կը սորվին ցամաք երկիր, Մէմ-
մոյ :

— Անանկ է . և թէ որ իմացուի որ
զու սպաններ ես այդ խողը, դատաս-
տան կը բանան վրադ, և Օրս' Անտոն
չուզենար պաշտպաննել գքեզ դատա-
ւորաց առջին, և փաստաբանին ստակ
տալ : Բարեբազգաբար մարդ չտեսաւ
զքեզ, և սրբուհի Նեկա վտանգէն խա-
լսեց զքեզ :

Քիչ մը ատեն մտածելէն ետքը, եր-
կու հովիւներն որոշեցին որ ամենէն ա-
ւելի խոհեմ ճամբան խողը փոսի մը
մէջ նետելն էր . ինչպէս որ ըրին . բայց
իւրաքանչիւրը մէյմէկ մեծ կտոր մէկդի
դնելով խեղճ խողին մնէն, որ տէլլա
Ռէպիկաններուն և Պարրիչիներուն ա-
տելութեանը զոհ եղեր էր :

Կը շարունակուի :

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Յ Մ Ե Ծ Ա Յ

Բ Ա Ս Ե Ն

Յերկուս բաժանի գաւառդ 'ի Վերին և 'ի Ստորին . սա յարելից վերնոյն .
ընական դրիւքն զանազանին յիրերաց, այնու զի Վերինն ծայր 'ի ծայր համօրէն
տարածութեամբն տափարակ է այնպիսի յորում չերևի և ոչ բլուր մի դուզնա-
քեայ՝ որ արգել հայելց լինիցի կողմանէ 'ի կողմն, բաց յոստոյ մի լերինն ծիրա-
նեաց՝ որ 'ի հիւսիսոյ երկայնեալ ձգի 'ի դաշտ անդը լայնածաւալ : իսկ Ստորինն

ոչ այնպէս է . զի թէպէտ և չիք լեառն 'ի նմա , այլ բարձունք և բլուրք և ձորք ուրեք խիտ առ խիտ և ուրեք ցրիւ կան . ընդարձակութեամբն առաւելու սա յոյժքան զվերինն . այլ արգաւանդութեամբն երկոքին միօրինակ , իմա ցորենոյ և գարւոյ , որով շտեմարանք են գաւառին կարնոյ , սակայն զուրկ ամենեին 'ի պլուղոց և մերկ յանպտուղ ծառոց :

Հ Ա Ս Ա Ն Գ Ա Լ Է

Գլխաւոր տեղի և աւան 'ի վերին Բասեն , առ հասարակ պարսպապատ կրկին պարսպաւ . և է շինեալ 'ի ծայր ոստոյ Ծիրանեաց լերինն՝ զոր 'ի վերն յիշեցաք , 'ի զառիվայրի նորին դէպ յարեւմուտս , և ներքնաբերդն 'ի գաղաթան քարալերինն . իսկ կրկին պարիսպքն ըստ դրից աւանին ածեալ են շուրջանակի ցածագոյն , սկսեալ 'ի թիկանց կամ յարեւելից կուսէ քարալերինն բարձու , քանզի փոքր մի և անդր ձգի պարիսպն՝ առ երկուստեք զառիվայր լինելոյ լերինն , տարածեալ յարեւմուտս կոյս 'ի խոնարհ 'ի վերայ դաշտավայրին : Զիք ուրեք յայսումիկ կողմանս գեղեցկադիր վայր քան զսա . մինչև ելեալ 'ի միջոց անդր բերդին , տեսարան ընդարձակածաւալ դաշտին Բասենոյ հիացուցանէ զաշ . իսկ եթէ 'ի ներքնաբերդ անդր մտանիցէ ոք՝ հասեալ մինչև ցծայր շինուածոյն 'ի վերայ անդնդախոր քարափանն կառուցելոյ՝ յափշտակեալ յիմարին միտք ընդահեղ և վսեմ բարձրութիւնն և ընդ անօրինակ ընդարձակութիւնն՝ յոր ձգտի տեսութիւնն . զի ոչ համօրէն վերին Բասեն միայն առաջի նորա նկարի իրբե 'ի հայելոջ , այլ մասամբ և Ստորինն . 'ի հանդիփոյ 'ի բազում հեռաստանէ ափափայք լերանցն թէքմանայ , և 'ի դաշտին գետն Մուրց և Երասխ մանուածաւալ ընթացիւք պտոյտքեալ : Զկարեմ որպէս արժանն է զվսեմութիւն վայրացն 'ի դրի հարկանել , այլ նա միայն գիտէ քաջ՝ որ անձամբ առ տեղեան կացեալ և չկամի 'ի բաց անցանել : Ներքնաբերդն դատարկ է 'ի բնակչաց և ամայի . ամենայն քարակերտ շինուածք և գետնափոր պահարանք քանդեալ և կործանեալ . միայն պարիսպքն անեղծ կան : Է անդ և ստորերկրեայ ճանապարհ 'ի վերուստ մինչև ցեղը Մուրց գետոյ որ անընդմիջաբար առ բերդին անցանէ , սակայն ընդայլ աւերակմն և այն ևս խանդարեալ է , որ և արտաքուստ երեխ յանցանեն առաջի բերդին : Արձանագիր չիք ամենեին ոչ 'ի վերայ դրանց արտաքնոյ բերդին և ոչ 'ի վերայ ներքնաբերդին : Հայազգի բնակիչք բազում էին անդ . այլ ընդարշաւանին Ռուսաց գաղթեցին առ հասարակ մինչև չմնալոյ 'ի նոցանէ և ոչ մի . և արդ տաճկաբնակ է : Տունք և այլ շինուածք և սակաւաթիւ կրպակն ըստ օրինի գեղջկաց , և ոչ ինչ այլ նշանաւոր 'ի նմա : Ելանէ աստի աղբորակ : Յեղերս Մուրց գետոյն առ աւանաւն երեք ջերմուկք կան , մին անյարկ և երկուքն գմբէ-սորք :

ԿԱՐՍ

Ի գաւառին վանանդայ՝ 'ի հնումն Անփայտ և վերին բասեն կոչեցելոյ , կայ քաղաքս այս 'ի ստորոտս լերանց : Յերկուս բաժանի , 'ի բերդ և յարուարձան . երկոցուն ևս մասամբ 'ի վերայ բարձանց և մասամբ 'ի դիւրի կալով : Բերդն կըր- կնապարիսպ է և ընդարձակ յոյժ , և որպէս զչասանդալէին հարաւային կող- մանք պարապիդ 'ի դիւրոջ նստեալ , կողմանքն արևելեան և արևմտեան տակաւ ամբարձեալ 'ի վեր որպէս ինչ դիրք քարալերին մեծի են , երթեալ յանդին յահեղ իմն բարձրութիւն , որոյ հիւսիսակողմն 'ի պարապէն ցյատակն ձորամէջ խորանդունդք են , ընդ որ գետն անցանէ . նոյնպիսի է և արևմտակողմն . իսկ 'ի կողմն արևելից անդր քան զպարիսպն երկայնեալ ձգի բըուրն մեծ կիսաժամու տարակայութեամբ : Յարևմտակողմն 'ի գազաթան բարձու ամբարձեալ է միջ- նարերդն բարձրապարիսպ և երկայնանիստ ընդ արևելս կոյս : Են 'ի նմա այլ և այլ տեղիք քարաշէնք և փայտակերտք . է որ 'ի պէտս պատերազմական զինուց և է որ 'ի բնակութիւն պահնակ զօրաց , որ անմեկնելի են անոտի : Ի միջնաբերդէ մինչև ցեղը գետոյն գետնափոր ուղի կայ , այլ արդ քանդեալ իսպառ : Իսկ ար- տաքոյ միջնաբերդին բնակութիւննք են քաղաքացւոց 'ի մէջն անդ բուն բերդին մինչև 'ի ստորին պարիսպն . և երես նորա զառիվայր շեղեալ 'ի հարաւ կոյս՝ ե- րևելի է ամենայն վայրն յարուարձանացն , որոց ոմն 'ի դիւրի ոմն 'ի բլրի և այլ ոմն 'ի 'ի ձորոյ սկսեալ զառիվեր ամբառնայ բլրաձև : Յոյժ ստորին են ձեք տանցն , հողայարկք և հողածեփք , ոչ ինչ տեսիլ գեղեցկութեան ունելով ոչ ներքոյ և ոչ արտաքոյ . թող զփողոցացն տղմաշաղախ գարշութիւն յանձրեոյ :

ՀԻՆ ԽԱՅԵՂԵՑԻՔ . — Առ 'ի նախնեաց մնացեալ նշխարք հնութեանց բաց 'ի պա- րըսպացն՝ են 'ի բերդին , առաջին՝ մայր եկեղեցին որ անարատ կայ ցայսօր և է 'ի ձեռս ջաճկաց . թէպէտ ոչ շատ մեծ , այլ հոյակապ « վիմարդեան արձանօք , որ- » ձաքար պողովատաշ վիմօք բոլորապէս գմբէթաւորեալ պայծառ զարդուք երկ- » նանման խորան » , որպէս նկարագրէ Ասողիկ : Արտաքին ձև նորա բազմանկիւն բոլորչի . այլ քառամիւն է ներքինն , թե իւրաքանչիւր կիսաբոլոր և զուգահաւա- սար իրերաց . զգմբէթն թեքն իւրաքանչիւր փոխանակ սեանց 'ի վեր ունին՝ եր- կայնաձև և սրածայր ըստ օրինակի արևելեան եկեղեցեաց : Քարինքն առ հասա- րակ սեագոյն են : Բարձրաքանդակ պատկերք կան նորա երկոտասան շուրջանա- կի զկաթողիկէիւն անարուեստք . և 'ի թուոյ նոցա թերես կոչեն Առաքելոց ե- կեղեցի : Արձանագիր չիք ուրեք 'ի վերայ եկեղեցւոյս . սակայն առ անեցւոյն Սա- մուէլի յիշատակի և շինողն և ամ շինութեանն 'ի թուիս ՅՀԹ (930) որ ասէ . « Աբաս որդի Սմբատայ շինէ զաստուածաբնակ տաճարն զկաթողիկէ 'ի կարս » հրաշանշան յօրինուածովք » : Առընթեր եկեղեցւոյդ կայ և մատուռն մի հնա- շէն : Իսկ երկրորդ և երրորդ եկեղեցիքն , որ և նոյնպէս 'ի ձեռս ջաճկաց կան , մին գմբէթարդ է և միւսն կամարակապ . որք թէպէտ և հոյակապութեամբն ստորին են քան զկաթողիկէն , այլ հնութեամբն ոչ շատ կրսերագոյնք ժամա-

Նակաւ։ Յարևելակողմն որմոյն առ պատուհանաւ միոյ յերկուց եկեղեցեացդ կայր հայ արձանագիր, այլ առ խանդարանացն անվերծանելի։ Մօտ՝ ի պալատ փաշային երեխ և այլ շինուած մի քարակերտ փոքր և կիսաւեր, և թուի եկեղեցի լինել։ Զերկուս նահատակի գերեզմանո ցուցանեն։ մին՝ ի դաւթի մզկիթի ուրեք և միւսն՝ ի ներքնաբերդն, այլ ոչ ուստեք երաշխաւորեալ անշուշտ աւանդութեամբք։

Արշանահրք։ Ի վերայ դրանց պարսպին և դրան միշնաբերդին արձանագիրք կան տաճկերէն, յայտ է թէ ՚ի նորոգութեան կամ թէ յետ տիրապետութեան յաւելան դոքա ՚ի ջաճկաց։ քանզի հայ արձանագրութիւնքն անկորուստ կան տակաւին ՚ի կողմն արևմտից ՚ի վեր քան զՊէյրամ փաշա գափուռսի դուռն կարդաւ ՚ի վերայ աշտարակաց ներքին պարսպին, տեսանելի և արտաքս քան զպարիսպն։ և վերուստ ամենեցուն կայ խաչ քանդակագործ զարդարուն ադուցեալ յորմն, և արձանագիրն ՚ի ստորեւ։ Առաջինն խառն է ՚ի վրացերէնէ, և է այս։

† Յը զարուեա ամոռա ման ՌՀ.. | զըմ զ(զըմ).... | զօննուեա
| նյօնեա....

յորում այսչափ ինչ խմացեալ լինի « Ես Ուս , աղա, շինեցի ՚ի թագաւորութեան յամի » . . .

Կատարեցաւ բրջներս Ճ

❖ ՈՉԵ (Թվին) որ բրջներս երկ
բորդ հրամանա իս ամիրմուշ
բիւ Աբրէհմայ ից արքաին ինք
նակալ ըռո յն որ ագավ ի թագ
աւորի որ այսմ ամին գաւորութեն իւր

Միմիթար գրիչ եւ նկարիչ

ՈՉԳ

ՏՐ ՛Ճ զաւր զթագաւոր
ն Ար . . . լեր ալլազգեց կատ
արեցաւ բրջներս ձեռամբ
Ընձկանն Գաղնին եւ Ոլտին

**Շնորհիւն Այ եւ ողորմութե՞ր Թագին մերոյ
ըռուսուդանայ մեք կարուց քրիստոնայքս
մեծ եւ փոքր շինեցաք զբրջներս ի յիշատակ
մեղ եւ պատրոնին մերոյ**

**Թվիս ՈՉԳ ի Թագաւորութե՞ս ըռուսուդանա
յաթապակութենն իւանէի մեք կարուց քրիստո
նէքս շինեցաք զբրջներս ի հալալ արդեանց մերոց**

Ի վերայ միոյ բարձր աշտարակի ներքնաբերդին՝ առ որով է փոքրիկ դուռն որ
իջանէ ընդ զառիվայր խորանդունդ ձորոյն, արձանագիրս թերի.

• • • • • • • • ինեց
բուրջ • • • • • ի թե
սո : ան • • • • ա • • ի ար
ձել ամ | • • • ալարթաղի
ագին չա | • • • ոգյողութս

Ի վերայ այլում աշտարակի առընթեր դրան շուկային.

Ե ՈԼԳ Թուիս շինեցաւ բուրջն .

• • • • • • • • • • • • • •

Միւս ևս հայ արձանագիր կայր 'ի վերայ նոյն դրան, այլ զարձանն յերկուս
խորտակեալ ագուցեալ են 'ի ձախակողմեան որմն առընթեր դրանն 'ի բարձու,
զոր չեղեւ հնար ընթեռնուլ և ոչ իսկ դիտակաւ, յորում գուցէ յիշատակ լեալ
էր Աբասայ կամ նմանեաց նորա. և փոխանակ այնր տաճիկ յիշատակարան ե-
դեալ է 'ի վերայ դրանն :

ԳԵՏ. Ի թիկանց ներքնաբերդին այլ լեառն ամբարձեալ կայ 'ի հանդիպոյ,
և ընդ ձորն խոր որ ընդ նա և ընդ լեառն բերդին՝ ընթանայ գետն, որ և պա-
տեալ զարևմոիւք և զհիւսիսիւ բերդին՝ անցեալ գնայ ընդ մէջ արուարձանացն,
բաժանեալ յայլ և այլ առաջս առուակաց, և կամուրջք են նորա երեք քարա-
շէնք մեծամեծք :

ՎԱՃԱՌԻՆ. — Վաճառաշահութիւն կարուց թէպէտ և ոչ հաւասարիցի մեծա-
ծամեծ քաղաքաց, սակայն և ոչ աննշան ինչ է 'ի պատճառս անթիւ երթևեկաց
գեղջէից իւրոյ գաւառին և Շիրակայ և կաղզուանայ, եւս և 'ի սահմանէն Ռու-
սաց: Բերք նորա ցորեան է և գարի. իսկ պտուղք 'ի կաղզուանայ գան առա-

տութեամբ։ Հանդէպ քաղաքին է ընդարձակ դաշտն վանանդայ որ յարևմտից սահմանակից է Բասենոյ՝ յորմէ բաժանի Սօղանլը լերամբ։

Առջ. Կարս եկաց աթոռանիստ երից թագաւորաց Հայոց, Մուշեղի եղբօր Աշոտոյ Ողորմածի, Աբասայ որդւոյ նորա, և սորին որդւոյ Գագկայ, որ նեղեալ 'ի Յունաց և 'ի Թուրքաց՝ ետ զաշխարհն 'ի Յոյնս յամի 1064, առեալ փոխանակ այնր զԵրամնդաւ 'ի Փոքրն Հայս։ Յետ այնր Զարմաղան առաջնորդ Մուղալ Թաթարաց քանդմունս մեծամեծս հասոյց նմա։ և յետոյ Թիմուրլէնկ յամին 1394. Թող զոր Վիրք և Հագարացիք յափշտակելով 'ի ձեռաց միմեանց. մինչև անց առ Օսմանեանս 'ի վեշտասաներորդ դարու։



Կարս

ԳԻՒՏՊԵԹ. — Միով ժամաւ հեռի է 'ի Կարուց դիւլս այս ամայի առ Ախուրեան գետով. է հնաշէն եկեղեցի 'ի նմա բաղմանկիւնի, որոյ անկեալ է գմբէթն միայն, և գեղեցիկ է։